



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

## Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:  
LEXINGTON 2-5790

630 SECOND AVENUE  
NEW YORK 16, N.Y.

40

Թիւ 575  
Մարտ 8, 1956

Պատուարժան  
Միսկան Խորհուրդ  
Ուեսթ Փուլմընի Հայց. Եկեղեցւոյ Համայնքին  
Ուեսթ Փուլմըն.

Ազնիւ սիրելիք մեր.

Ստացած ենք Փետրուար 27, 1956 թուակիր ձեր ծխական տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Արքանաշնորհ Տ. Տիգրան Տիգրան ԲՆԵՅ. Խոյեանի նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսկան Խորհուրդի անդամոց ընտրութիւնը եւ ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձերուն պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ իբրեւ եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէք եւ պարտաճանաչ անդամներ, կը վայելեն ընտրողներու վստահութիւնը, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալին.—

Տիարք՝ Յակոբ Հազաւմազեան  
Սուրէն Տէրտէրեան  
Գարլըս Գիրակոսեան  
Անդրանիկ Պօրոյեան

Կ'օրհնենք Միսկան Խորհուրդիդ նորընտիր անդամները եւ վստահ ենք որ անոնք եւս իրենց շանքերը միացնելով իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի գործեն ծուխիդ հոգեւոր օգտին, Ս. Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով ձերի կարողութիւն եւ յաջողութիւն.

Մամք սիրոյ ողջունելի  
Աղօթարար

ՎԱՐՈՒԱՆ ԲԼՆՑ.ՄԿՐԵԱՆ  
Առաջնորդի Փոխանորդ